# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի  թիվ 7 միջնակարգ  դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի  ( 13 դասաժամ), ֆիզկուլտուրայի ( 22 դասաժամ), ռուսաց լեզվի  ( 20 դասաժամ ), ինֆորմատիկայի ( 5 դասաժամ)  ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձեւ 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 1-ից մինչեւ  հունիսի 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. Հունիսի 16-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 7  միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 1/4:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 23-76-97 հեռախոսահամարով: